Հովհաննես Շիրազ

Հայաստանի աղջիկներին

Հուրն են սիրո սևի սիրուն լույս աղջիկներն Հայաստանի,
Սրտիս վրա քայլող գարուն՝ կույս աղջիկներն Հայաստանի,
Իմ սիրտն ի՜նչ է, ա՛խ, թե ուզեն՝ բերդեր կառնեն մի հայացքով,
Անառիկ բերդ ու սիրո սյուն՝ հույս աղջիկներն Հայաստանի:

Մեկը մեկից պարզ ու կախարդ, մեկը մեկից խոսքով քաղցր,
Ետ կբերեն ալևորին, օձ կթովեն աչքով քաղցր, –
Մեկը՝ աստղիկ, մեկը՝ լուսնյակ, մեկն՝ արևի տեսքով քաղցր, –
Իմ Հայաստանն են զարդարում նուրբ աղջիկներն Հայաստանի:

ՈՒ չգիտեմ որի՞ն սիրեմ, որի՞ն թողնեմ անհագ սրտով,
Ամենքին է սրտիս աչքը արևի պես կրակ սրտով,
Երբ հուր ծովի պես են քաշում՝ ո՞նց դիմանաս վտակ սրտով, –
Ինձ աստղերից ցած են բերում սուրբ աղջիկներն Հայաստանի:

Իմ Սևանը ո՞նց ցամաքեց, երբ սևածով աչքերը կան,
Իրենց նման հարբեցընող գինին քամող ձեռքերը կան,
Վարդ շուրթերին բուրմունքի պես Կոմիտասի երգերը կան, –
Քարից անգամ լույս են քամում բյուր աղջիկներն Հայաստանի:

Բայց մի գանգատ ունի կյանքս՝ այն, որ ինձ մի վարդ չտվին,
Սուրբ եմ Արա Գեղեցիկի պես՝ ինձ մի սուրբ Նվարդ չտվին,
Ինձ թողեցին գիրկն ընկածի, դեռ ասում են՝ դարդ չտվին, –

Գերեզմանս են աչքով փորում զուր՝ աղջիկներն Հայաստանի:

Առանց նրանց՝ երգս պաղ էր՝ արև բացին իմ երգի մեջ,
Նրանց սիրո ձեռագործն է ծիածանը երկնքի մեջ, –
Բայց քաջ կասեմ՝ մեկին սիրես, լավի՛ն սիրես ու լա՛վ սիրես,
Որ քեզ պաշտեն բոլո՛ր սիրուն, լույս աղջիկներն Հայաստանի: